Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Արմավիրի մարզի Ակնաշենի գյուղապետի 2016 թվականի երկրորդ կիսամյակի և տարվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ.

2017թ հունվարի 19-ին, ժամը 14-00-ին տեղի ունեցավ Ակնաշենի գյուղապետի 2016 թվականի երկրորդ կիսամյակի և տարեկան հաշվետու նիստը:Նիստին մասնակցում էին ավագանու անդամները,համայնքի 68 (վաթսունութ) բնակիչներ և Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ՝ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ՝Գոռ Հովհաննիսյանը:

Զեկուցող գյուղապետ՝ Միսակ Միսակյան.

2016 թվականի տարեկան բյուջեով նախատեսվել է վարչական բյուջեի եկամուտ՝37964.0հազար դրամ,այդ թվում՝

1. Հողի հարկից եկամուտ՝ 4500.0 (չորս միլիոն հինգ հարյուր) հազար դրամ.
2.Գույքահարկ՝4712.4 (չորս միլիոն յոթ հարյուր տասներկու հազար չորս հարյուր հազար դրամ.
3.Տեղական տուրքեր՝194.0 (մեկ հարյուր իննսունչորս) հազար դրամ.
4.Համայնքի սեփականություն համարվող հողերից վարձավճար՝634.6 (վեց հարյուր երեսունչորս հազար վեց հարյուր) հազար դրամ.
5. Ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքին հատկացվող դոտացիա՝ 27923.0 (քսանյոթ միլիոն ինն հարյուր քսաներեք հազար) հազար դրամ.

Տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 1117.7(մեկ միլիոն մեկ հարյուր տասնյոթ հազար յոթ հարյուր) հազար դրամ.

2016 թվականի երկրորդ կիսամյակի վարչական բյուջեի եկամուտների պլանը կազմել է 20631.7(քսան միլիոն վեց հարյուր երեսունմեկ հազար յոթ հարյուր) հազար դրամ: Փաստացի եկամուտները կազմել են՝ 17858.3(տասնյոթ միլիոն ութ հարյուր հիսունութ հազար երեք հարյուր) հազար դրամ, հաշվետու տարում մուտքագրվել է 33878.3(երեսուներեք միլիոն ութ հարյուր յոթանասունութ հազար երեք հարյուր) հազար դրամ,

2016 թվականի եկամուտների պլանը կատարվել է 89.2 % ով, այդ թվում համապատասխանաբար՝

ա/Հողի հարկի երկրորդ կիսամյակի պլանը կազմել է՝2625.0 հազա դրամ,փաստացի մուտքագրվել է՝ 1410.4 հազար դրամ,հաշվետու տարու մուտքագրվել է 2084.4 հազար դրամ,տարեկան պլանը կատարվել է 46.3 % ով:
բ/Գույքահարկի գծով կիսամյակի պլանը՝3292.4 հազար դրամ փաստացին՝2190.6 հազար դրամ, հաշվետու տարում մուտքագրվել է 3426.3 հազ դրամ:
գ/ Տեղական տուրքերի պլանը՝97.0.0հազար դրամ, փաստացին՝ 137.5 հազար դրամ,կամ՝141.7%.
դ/.Համայնքի սեփականություն համարվող հողերից վարձավճարի պլանը 317.3 հազար դրամ, փաստացին՝ 38.6 հազար դրամ.կամ՝12.2%.
ե/ Դոտացիայի կիսամյակի պլանը կազմել է 11526.8 ,որը հատկացվել է 100 %-ով
2016 թվականի սեփական եկամուտների երկրորդ կիսամյակի պլանը կազմել է՝5020.5 հազար դրամ,փաստացի սեփական եկամուտները՝1005.5 հազար դրամ , կամ՝ 20.0% ,այդ թվում՝
ա/ Հողի հարկի տարեկան պլանը կազմել է՝4500,0 հազար դրամ,փաստացի մուտքագրվել է՝ 2084.4 հազար դրամ կամ՝46.3%..
բ/Գույքահարկի պլանը՝4712.4 հազար դրամ , փաստացին՝3426.3 հազար դրամ,կամ՝72.8%.
գ/ Տեղական տուրքերի պլանը՝194.0 հազար դրամ, փաստացին՝ 195.0 հազար դրամ կամ՝100.5%.
դ/.Համայնքի սեփականություն համարվող հողերից վարձավճարի տարեկա պլանը՝634.6 հազար դրամ. փաստացի՝ մուտքագրվել է 249.6 հազար դրամ.
ե/ Դոտացիայի տարեկան հատկացումների պլանը կազմելէ 27923.0 հազար դրամ ,հատկացվել է 100.0 %-ով:

2016 թվականի սեփական եկամուտների տարեկան պլանը 2015 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել է 912.3 հազար դրամով, փաստացի սեփ.եկամուտները նվազել է՝ 3173.4 հազար դրամով,այդ թվում՝

Հողի հարկի փաստացի եկամուտը 2016 թվականին 2015 թվականի համեմատությամբ նվազել է է 938.2 հազար դրամով,գույքահարկի գծով նվազել է 1760.2 հազար դրամով,վարձավճարը նվազել է 495.0 հազար դրամով, տեղական տուրքը ավելացել է 20.0 հազար դրամով:

2016թվականի երկրորդ կիսամյակում կատարվել են հետևյալ ծախսերը՝
ա/ Աշխատավարձ՝ 10209.0 հազար դրամ.
բ/Էներգետիկ ծառայություններ՝ 1004.0 հազար դրամ.
գ/Կապի ծառայություններ՝ 160.0 հազար դրամ.
դ/Տրանսպորտի վարձակալություն՝ 480.0 հազար դրամ.
ե/Ներքին գործուղումներ՝127.0 հազար դրամ.

զ/համակարգչային ծառայությունների համար՝120.4 հազար դրամ.
է/Տեղեկատվական ծառայություններ՝0 հազար դրամ.
ը/Ներկայացուցչական ծախսեր՝163.5 հազար դրամ.
թ/Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝1368.0 հազար դրամ.
ժ/Մասնագիտական ծառայություններ՝419.4 հազար դրամ.
ի/Շենք և շինութ, ընթ. Նորոգում և պահպանում՝ 648.2 հազար դրամ.
խ/Գրասենյակային նյութեր՝399.3 հազար դրամ.
լ/Տրանսպորտային նյութեր՝400.0 հազար դրամ.
խ/Կենցաղային և հանր. Սննդի նյութերը՝365.8 հազար դրամ.
ծ/ Հատուկ նպատակային այլ նյութեր՝801.0 հազար դրամ.
կ/Ընթացիկ դրամաշնորհներ՝440.0 հազար դրամ.
հ/Գրքերի ձեռք բերման համար՝0 հազար դրամ.
ձ/Ջրի պոմպերի ձեռք բերում՝ 373.2 հազար դրամ.
ղ/ Նախագծահետազոտական ծախսեր՝ 50.0 հազար դրամ.
ճ/Կոմունալ ծախսեր՝ 840.0 հազար դրամ.

շ//Ջրամատակարարման ծախսեր՝ 782.5 հազար դրամ.
ռ/Շենք և շինութ.կապ.նորոգում՝ 572.0 հազար դրամ.
չ/Սոցիալական օգնություն՝ 880. հազար դրամ (Սոցիալապես անապահով բնակիչներին հատկացվել է սոց օգնություն):

2016 թվականի երկրորդ կիսամյակում ստացվել է 114/մեկ հարյուր տասնչորս/,ուղարկվել՝86 /ութանասունվեց/ փաստաթուղթ.
Հրավիրվել և անցկացվել է ավագանու 4 /չորս/ նիստ, ընդունվել է 21 /քսանմեկ/ որոշում , ղեկավարի՝42/քառասուներկու/որոշում արձակվել՝ 17 /սասնյոթ/կարգադրություն:
Արձակվել է աշխատակազմի քարտուղարի 29/քսանինը/ հրաման.
Քաղաքացիներին տրվել է 432 /չորս հարյուր երեսուներկու/ տեղեկանք:
Քաղաքացիներից ընդունվել է 45/քառասունհինգ/ դիմում:

2016 թվականի ընթացքում ստացվել է 239/երկու հարյուր երեսունինը/,ուղարկվել՝170 /մեկ հարյուր յոթանասուն/ փաստաթուղթ.
Հրավիրվել և անցկացվել է ավագանու 8/ութ/ նիստ, ընդունվել է 39 /երեսունինը/ որոշում , ղեկավարի՝59 /հիսունինը/ որոշում, արձակվել՝ 24 /քսանչորս/կարգադրություն:
Արձակվել է աշխատակազմի քարտուղարի 44/քառասունչորս/ հրաման.
Քաղաքացիներին տրվել է 759 /յոթ հարյուր հիսունինը/ տեղեկանք:
Քաղաքացիներից ընդունվել է 79/ յոթանասունինը/ դիմում:

Չնայած կատարված աշխատանքներին՝ համայնքում կան չլուծված խնդիրներ՝

1. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում.

2. Խմելու ջրի ջրագծերի նորոգում.

3. Կարեն Դեմիրճյանն Օգանյան փողոցիմի հատվածի գազաֆիկացում:

4."Շորղարա " հանդամասի շուրջ 40 հեկտար վարելահողի ոռոգման ջրի հարցը/հորատել մեկ խորքային հոր/:

5. Վերանորոգել դպրոցի կոյուղու վերջնամասի 300 մետր հատվածը:

Ակնաշենի համայնքապետ՝ /Մ.Միսակյան/

Աշխատակազմի քարտուղար՝ /Խ.Հովակիմյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի ղեկավարի 2016թվականի երկրորդ կիսամյակի և տարեկան հաշվետվություն

2017թվականի հունվարի 19-ին կայացավ Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի ղեկավարի 2016թվականի տարեկան հաշվետվությունը: Հաշվետվությանը ներկա էին ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ՝ Գոռ Հովհաննիսյանը, Ակնաշեն համայնքի ավագանու անդամներ՝ Աշոտ Գևորգյանը, Գարիկ Հովհաննիսյանը, Գագիկ Խուրշուդյանը, Զավեն Արշակյանը և Ակնաշեն համայնքի 68 բնակիչներ: Համայնքի ղեկավարը հանգամանալից ներկայացրեց 2016թվականի երկրորդ կիսամյակի և տարեկան հաշվետվությունը՝ կատարած աշխատանքների մասին: Ակնաշեն համայնքի անդամներն իրենց շնորհակալությունն հայտնեցին Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանին և համայնքի ղեկավար Միսակ Միսակյանին համայնքում կատարած աշխատանքների համար: Համայնքի Կ.Դեմիրճյան փողոցի բնակիչները կրկին հարց բարձրացրեցին և խնդրեցին լուծել իրենց փողոցի գազաֆիկացման խնդիրն: Համայնքի ղեկավարը պատասխանեց, որ դեռ 2015թվականին «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն խոստացել է նշված փողոցը գազաֆիկացնել 2017թվականի տնտեսական տարում: Համայնքի Այգեգործների փողոցի բնակիչ, ավագանու անդամ՝ Գագիկ Խուրշուդյանը հարց բարձրացրեց լուծելու դպրոցի կոյուղագծի անմխիթար վիճակն: Համայնքի ղեկավարն պատասխանեց, որ իրոք ներկա գործող կոյուղագծի վերջին 300 մետր հատվածը փլուզվել է և կանոնավոր չի գործում, փլուզված լինելու պատճառով հաճախ լինում են խցանումներ, որի պատճառով կեղտաջրերը վնաս են պատճառում փողոցի բնակիչներին: Հրատապ լուծման համար դիմել ենք Կրթության նախարարության և Արմավիրի մարզպետարան:

Բնակիչների կողմից կրկին հարց բարձրացվեց լուծելու «Շորղարա» կոչվող հանդամասի շուրջ 40 հա հողատարածքի ոռոգման ջրի խնդիրն: Համայնքի ղեկավարը պատասխանեց, որ այս հարցը լուծելու համար համայնքապետարանը դիմել է պատկան մարմիններին և խնդրել այդ հատվածում խորքային մեկ հոր հորատելու համար, որով կլուծվի ոռոգման ջրի խնդիրը:

Արձանագրությունը կազմեց համայնքապետարանի

Աշխատակազմի քարտուղար՝ / Խ.Հովակիմյան/

Ակնաշեն համայնքի ղեկավար՝ /Մ.Միսակյան/